

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 16-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Հայկակուն վրդ. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում՝ «Զողորմութիւն կամիմ և ոչ զոհ» (Մատթ. ԺԲ 13) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 23-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ վրդ. Խարապյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում՝ «Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (Ա Կորնթացիս Գ 16) բնաբանով:

Իր քարոզում հայր սուրբը, բացատրելով «տաճար» բառի իմաստը, նշում է, որ «Աստված սիրում է բնակվել կենդանի Աստուծո կենդանի տաճարների՝ մարդկանց մեջ: Հետևաբար մարդիկ պարտավոր են մաքուր, անաղարտ պահել իրենց սրտերը՝ որպես Սուրբ Երրորդության բնակարան»:

*
* *

Հունիսի 27-ին, հինգշաբթի—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի է ունենում «Եկեղեցական հանդես»:

Օրվա պատարագիչն է Օշականի վանահայր Տ. Բագրատ աբդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում՝ «Երանի իցէ ծառայիցն այնոցիկ զորս եկեալ Տէրն գտցէ արթունս» (Ղուկաս ԺԲ 37) բնաբանով:

*
* *

Հունիսի 30-ին, կիրակի.— Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ տեր հայրը քարոզ է խոսում՝ «Ճանաչել վիմաստութիւն և ըստ խրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակաց Ա 1) բնաբանով:

Իր խոսքի մեջ տեր հայրը անդրադառնում է Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակի և թարգ-

սանիչ վարդապետների գործունեությունը՝ ընդգծելով գրերի գյուտի դերը հայ ժողովրդի մշակութային վարգացման և ազգային ինքնուրույն դիմագիծ ստեղծելու համար:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Հուլիսի 7-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում՝ «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւույն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19) բնաբանով:

Տեր հայրը նշում է, որ «Քրիստոսի ծնունդը մարդկության համար բացեց նոր դարաշրջան, կյանքի նոր իմաստավորում: Այդ նոր կյանքի ճանապարհի հարթողները եղան Քրիստոսի աշակերտները»:

Այնուհետև համառոտակի անդրադառնում է առաքյալների կյանքին ու գործունեությանը:

*

* *

Հուլիսի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*

* *

Հուլիսի 14-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը քարոզ է խոսում՝ «Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս» (Շարական) բնաբանով:

Իր քարոզում սրբազան հայրը Վարդավառի ավանդական ազգային իմաստը բացատրելուց հետո անդրադարձավ նրա քրիստոնեական իմաստին: Նկարագրելով Քրիստոսի այլակերպության ավետարանական դրվագը, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս իր ճշմարիտ փառավորյալ դեմքը ցույց տվեց իր մի խումբ աշակերտներին, պատարագիչ սրբազանը ի մասնավորի նշեց, որ Քրիստոս Թաբոր լեռան վրա մի ակնթարթ մարդկության աչքի առջևից վերցրեց խավարի վարագույրը՝ ցույց տալու համար իր Աստվածությունը: Քարոզիչ սրբազանը մաղթեց, որ այսօր ևս պայծառակերպյալ մեր Տերը իր ճշմարիտ դեմքը ցույց տա մարդկությանը՝ նրանց հրավիրելով դեպի եղբայրասիրություն, որպեսզի մարդիկ աշխարհի վրա ապրեն խաղաղ ու բարօր:

*

* *

Հուլիսի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգոր քհն. Տերտերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»:

*

* *

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ ուսման և հովվական ծառայության համար արտասահման են գործուղվել Մայր Աթոռի մի շարք միաբաններ.

1. Տ. Թորգոմ վրդ. Խարապյան (Կանադա, 1985 թ. հուլիս).
2. Տ. Ասողիկ աբղ. Արիստակեսյան (Ֆրանսիա, 1985 թ. փետրվար).
3. Տ. Շնորհք աբղ. Բաղդասարյան (Անգլիա, 1985 թ. հունիս).
4. Տ. Ղևոնդ քհն. Հարությունյան (Արգենտինա, 1985 թ. հունիս).
5. Տ. Վարդան քհն. Մկրտչյան (Հնդկաստան, 1885 թ. հուլիս:)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ (ՊՐԵՄԻԵՐ-ՄԻՆԻՍՏՐ)
ՊՐՆ. ՊԻԵՌ ՏՐՅՈՒԴՈՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ (2 ՀՈՒԼԻՍ 1985 Թ.)